



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 147646 29 08 2017թ.

2016թ. ԱՊՐԻԼԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016թ. սեպտեմբերի 1-ի թիվ 01/06-2/10525-16 և 2017թ. փետրվարի 7-ի թիվ 01/06.2/1493-17 նամակներով կատարված առաջարկությունը՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

### հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. 2016թ. ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցած լայնածավալ մարտական գործողություններին մասնակցած, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված Երևանի պետական համալսարանի ուսանողներին, զինվորական գրքույկներում համապատասխան նշման առկայության դեպքում 2017-2018թթ. ուսումնական տարում տալ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տարեկան սահմանված ուսման վարձավճարի 50 տոկոսի չափով:

2. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ-ի սովորողներին և կառուցվածքային ստորաբաժանումներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ